

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
13/09/2010թ թիվ 10-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
«15» սեպտեմբերի 2010թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-007

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ պայմանագիր կնքելու ժամանակ պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը)

**ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

1 ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար Ապահովագրողի (Ապահովագրողի լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի) կողմից Ապահովադրից (Ապահովադրի լիազորված անձից) պահանջվում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝

- 1) *Ֆիզիկական անձ Ապահովադրի դեպքում՝* Ապահովադրի անձնագրի (անձը հաստատող այլ փաստաթղթի), սոցիալական ապահովության քարտի (սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի), վարորդական իրավունքի վկայականի (առկայության դեպքում) պատճենները, իսկ Ապահովագրողի գրավոր կամ բանավոր պահանջով՝ նաև դրանց բնօրինակները, Ապահովադրի կապի միջոցները, վարորդական ստաժի վերաբերյալ տեղեկատվություն,
- 2) *իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր Ապահովադրի դեպքում՝* Ապահովադրի պետական գրանցման վկայականը, իսկ Ապահովագրողի գրավոր կամ բանավոր պահանջով՝ նաև վերջինիս բնօրինակը, ՀՎՀՀ-ն, բանկային հաշվի տվյալները և կապի միջոցները,
- 3) *այն դեպքում, երբ Ապահովադիր է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը՝* Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող մարմնի, վերջինիս հասցեի վերաբերյալ տեղեկություններ,
- 4) *այն դեպքում, երբ Ապահովադիր է հանդիսանում օտարերկրյա պետությունը՝* օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի, վերջինիս հասցեի վերաբերյալ տեղեկություններ,
- 5) *այն դեպքում, երբ Ապահովադիր է հանդիսանում Հայաստանի Հանրապետության համայնքը՝* համայնքի անվանման, համայնքի անունից հանդես եկող մարմնի, վերջինիս հասցեի վերաբերյալ տեղեկություններ,
- 6) լիազորված տիրապետողների վերաբերյալ սույն կետի 1-5-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները՝ կախված նրա բնույթից,
- 7) Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը (առկայության դեպքում) կամ մաքսային հայտարարագիրը, իսկ Ապահովագրողի գրավոր կամ բանավոր պահանջով՝ նաև դրանց բնօրինակները,
- 8) «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթերի (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, առուվաճառքի պայմանագիր, լիզինգի պայմանագիր, լիազորագիր և այլն)

պատճենները, իսկ Ապահովագրողի գրավոր կամ բանավոր պահանջով՝ նաև դրանց բնօրինակները,

- 9) Օրենսդրությամբ նախատեսված, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով՝ այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Վկայագրի համապատասխան դաշտերի լրացման կամ Ապահովագրի (լիազորված տիրապետողների) վթարավտանգության վրա ազդող և նրանց առողջական վիճակը բնութագրող գործոնները գնահատելու համար: